



ԹԱԳԱՒՈՐԻՆ ԼԱՍԱՆՁՈՏ ԻՇԽԱՆՆԵՐԸ

Թագաւորական պալատին մէջ ծառայող երկու իշխան գիրար կ'ատէին: Օր մը թագաւորը ուզեց փորձել զանոնք ու ըսաւ.

-Խնդրեցէ՛ք ինձմէ ինչ որ կ'ուզեք: Բայց գիտցէ՛ք, մէկուն խնդրածին դիմաց միւսին կրկնակի պիտի տամ:

-Թագաւոր,- կը հարցնէ մեծ իշխանը,- ինծի տուածիդ երկու՞ անգամը պիտի տաս միւս իշխանին:

-Այո՛, ինչ որ խնդրես՝ կու տամ, բայց անոր երկու անգամը պիտի տամ միւս իշխանին:

Մեծ իշխանը կը մտածէ «Եթէ ես քաղաք մը ուզեմ՝ կու տայ, բայց միւսին երկու քաղաք կը հասնի, սիրտս կը պայթի»:

-Թագաւոր,- կը դիմէ ան,- քեզմէ կը խնդրեմ, որ իմ մէկ աչքս հանես:

Թագաւորը կը հրամայէ հանել մեծ իշխանին աչքերէն մէկը:

Պարզ է, որ նախանձոտ մարդը իր անձին աւելի թըշնամի է, քան ուրիշներուն:



ԱՌԱՋԻՆ ԻՆՔՆԱՀՈՍ ԳԻՒՉՆԵՐԸ

Արագագիր գրիչները կը հպարտանային կարճ ժամանակի մէջ գործը աւարտելուն համար: Այդպիսի մէկը միջին երկաթագիրով, տառ առ տառ նկարելով, գրած իր գիրքի յիշատակարանին մէջ կ'ըսէ.

«Սուտ գծագրողիս՝ քաղաքացի Յովհաննէսին յիշման արժանի ըրեք. ո՛վ սուրբ գիրքերուն աշակերտող անձինք, քանի որ այս տետրակը 900 գիր մէկ անգամ թանաք առնելով գրեցի եւ ուրիշ անգամ՝ 20-30 եւ աւելի: Վարդարապետները վկայ»:

Սակայն անոր հպարտանալը ուրիշ պատճառ մըն ալ ուներ: Ան գրած էր ոչ թէ եղեգէ սովորական գրիչով, գրչածայրը յաճախ մեղանրին մէջ թաթխելով, այլ իր ժամանակի... ինքնահոսով, որ ստեղծած էին

Կիլիկիոյ գրիչները: Այս գրիչը, կամ ինչպէս կը կոչէին՝ գնդիկաւոր գրիչը, նոյնպէս եղեգէ էր, միայն թէ գրչածայրի ետեւը ուներ խեցեղէն գնդիկ մը, ուրկէ կը ծորեր թանձր թանաքը:

Ի դէպ, գրիչ կը կոչուէին եւ ընդորինակող անձերը, ե՛ւ գործիքը, որով կը գրէին:

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՐ՝ ՌԻՍԱ ԿՈՒՏԵԱՆ-ՏԻՊՈՒԹԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՐ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵԱՆ


**Ս. ԹԱՂԵՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ
ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ԻՆՉ ՆՈՒՐԱԿԱՆ
ՍՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԵՐԱԾ ԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆ**

Չոյգ լուսաւորիչները իրենց քարոզութեան ընթացքին Հայաստան բերած են կարգ մը նուիրական սրբութիւններ: Առաջինը՝ Ս. Դաստարակը, որ Յիսուսի պատկերն է: Ան երկար ժամանակ մնացած է Եդեսիոյ մէջ, սակայն խաչակիրներու շրջանին տարուած է Իտալիա: Միւս սրբութիւնը, որ տակաւին հայոց մօտ կը գտնուի Ս. Գեղարդն է, որով զինուորը խոցեց Յիսուսի կողը խաչին վրայ: Երրորդը, Աստուածամօր պատկերն է՝ փայտի վրայ նկարուած, զոր առաքելները նուիրեցին Բարթողիմէոսի, որ չէր կրցած մահէն առաջ տեսնել Աստուածամայրը: Տակաւին, եկեղեցւոյ մեր ականդութիւնը կը պատմէ, Ս. Թաղէոս առաքել Հայաստան բերած է այն իւղէն բաժին մը, զոր Յիսուս առաքելներուն փոխանցած էր: Այս է պատճառը, որ միւռնօրինութեան ժամանակ հին միւռնէն կը խառնուի նորին մէջ:

Հայ ժողովուրդի առաջին լուսաւորիչներու գերեզմանները կը գտնուին Հայաստանի մէջ: Թաղէոս առաքելի գերեզմանին տեղը ցոյց կը տրուի Արտազ գաւառին մէջ, ուր կայ Ս. Թաղէի վանքը, իսկ Բարթողիմէոս առաքելի գերեզմանը՝ Աղբակի մէջ, ուր կառուցուած է Ս. Բարթողիմէոս նշանաւոր մայրավանքը:



2



Կրնա՞ս գտնել նապաստակին համապատասխան շուրջը:



Կրնա՞ս գտնել հտպիտին կօշիկներուն հասցնող ճամբան:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած ութը պատառաքաղները:

ՄՆՄՈՒՄՆԱՎՎ ՕՐ ՄԸ

Իւրաքանչիւր ամսուան վերջին շաբաթը իմ նախասիրած օրս կը համարուէր, որովհետեւ մենք ընտանիքով սովորութիւն ըրած էինք համախըմբուիլ եւ ընտանեկան խաղ մը խաղալ: Ճիշդ է, որ ես կը պարտուէի, բայց միեւնոյն ժամանակ կը գրաւէի ու մեծ բաւականութիւն կը ստանայի:

Երկար ապաստումէ ետք՝ վերջապէս հասաւ որոշեալ ժամանակը: Բայց չմոռնանք, որ մեր հալէպը ինչ-ինչ պարագաներէ կ'անցնէր: Հետեւաբար չմոռնանք նաեւ, որ դպրոցական տարեշրջանին սկիզբը շաբաթ օրերն ալ դպրոց կ'ունենայինք: Արթնցայ ժամը 6:00-ին, հագուեցայ եւ պատրաստուեցայ դպրոց երթալու: Յանկարծ անդրադարձայ, որ ժամանակը արագ սահած է եւ արդէն իսկ՝ եօթն է:

Անմիջապէս վազեցի եղբօրս մօտ, որ տակաւին կը քնանար եւ սկսայ պոռալ.

-Եղբայ՛ր, արթնցի՛ր...

-Ի՛նչ է ուզածդ,- պատասխանեց եղբայրս զայրացած:

-Դպրոցէն պիտի ուշանանք:

-Դուն աշխարհէն լուր ունի՞ս, թէ ոչ նոր ծնար եւ դեռ ինծի կ'ըսես, որ խելացի եմ, հը՛ բան մը չես գիտեր եղեր,- պատասխանեց եղբայրս:

-Դուն ես, որ լուր չունիս աշխարհէն, ժամը 7:10-է, ե՛լ, հագիւ դպրոց հասնինք,- ըսի նեղացած:

Եղբայրս աչքերը բացաւ, ինծի նայեցաւ, գլուխը մօտեցուց, ձեռքը գլխուս վրայ դրաւ, ու փսփսալով ըսաւ.

-Պզտիկ եղբայրս, քեզի բան մը ըսե՛մ:

Գլուխ շարժեց իբրեւ հաւանութեան նշան:

-Այսօ՛ր, ժամերը փոխուեցան: Ինծի արթնցնելու տեղ, գնա՛ նախ միտքդ աշխատցուց:

Մէկ ժամ ետք հասանք դպրոց: Այս անգամ նկատեցի, որ սխալ գիրքեր բերած եմ, որովհետեւ օրը Ուրբաթ է եղեր:

-Ա՛խ, այս ի՛նչ ըրի այսօր: Խելքս տեղը չէ, ի՛նչ որ ընեմ՝ սխալ դուրս կու գայ:

Պարզուեցաւ, որ Շաբաթ օրը սպասելս ալ ի գուր էր եղեր: Իրապէս, որ ընտանեկան խաղը մտքիս ազդած էր:

Յակոբ Արսլանեան
«Ծիւեր» ԽԳ. Տարի

6.00 AM



7.00 AM



ՈՐՈՂԻ ԵՆ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍՄԻՈՐԻՉՆԵՐԸ

Քրիստոնեական կրօնքը Հայաստանի մեջ առաջին քարոզողները եւ հաստատողները եղան Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալները:

Ս. Թադէոս առաքեալ Քրիստոսի տասներկու աշակերտներէն մէկն էր: Քրիստոնէութիւնը քարոզելու համար նախ գնաց ասորիներու Եդեսիա քաղաքը, ուր կ'իշխէր Աբգար թագաւորը: Աբգար թագաւոր հիւանդ էր: Լսած էր որ Պաղեստինի մէջ Յիսուս անունով մարդ մը կար, որ հրաշալի բժշկութիւններ կը կատարէր: Աբգար չկրնալով անձամբ Երուսաղէմ երթալ, նամակով մը Յիսուսը Եդեսիա հրաւիրեց, որ գայ եւ զինք բուժէ: Յիսուս քարոզչութեամբ զբաղած ըլլալով չկրցաւ Եդեսիա գալ, բայց իր առաքեալներէն մէկը դրկեց: Այդ առաքեալը Թադէոս առաքեալն էր:

Թադէոս առաքեալ գնաց Եդեսիա եւ թագաւորական արքունիքին մէջ քարոզեց Յիսուսի կեանքն ու պատուիրանները: Աբգար թագաւոր հաւատաց Յիսուսի եւ հրաշքով բժշկուեցաւ Թադէոս առաքեալի կողմէ:

Առաքեալը առիթը յարմար նկատեց քրիստոնէութիւնը քարոզելու ժողովուրդին մէջ ալ: Իշխաններ եւ բազմաթիւ մարդիկ ընդունեցին քրիստոնեական կրօնքը եւ մկրտուեցան:

Թադէոս առաքեալ Եդեսիայէն Հայաստան անցաւ: Հայաստանի մէջ ամէն տեղ կռապաշտութիւն կը տիրէր: Առաքեալը շրջեցաւ զանազան քաղաքներ, քրիստոնէութիւնը քարոզեց եւ հաւատացեալները մկրտեց Յիսուսի անունով:

Այդ ժամանակ Հայաստանի թագաւորն էր Սանատրուկ: Թադէոս առաքեալ արքունի պալատին մէջ քարոզութիւն ու բժշկութիւն կատարեց եւ շատեր հաւատացին Յիսուսի եւ քրիստոնեական կրօնքը ընդունեցին: Ասոնց մէջ կը գտնուէր նաեւ Սանատրուկի աղջիկը՝ Սանդուխտ կոյս:

Թագաւորը մերժեց քրիստոնէութիւնը: Երբ լսեց որ իր հպատակներէն ոմանք քրիստոնէայ դարձած են սպաննեց զանոնք, իսկ իր աղջիկը՝ Սանդուխտ կոյսը, բանտարկել տուաւ:

Թադէոս առաքեալ, որ հրաշքով ազատած էր, գնաց բանտ եւ քաջալերեց Սան-



դուխտ կոյսը: Սանատրուկ իշխաններ դրկեց, որպէսզի համոզեն Սանդուխտը եւ կռապաշտութեան վերադարձնեն: Բայց հակառակը պատահեցաւ: Նոյն իշխանները իրենք հաւատացին Քրիստոսի եւ մկրտուեցան:

Թագաւորը, երբ տեսաւ որ իր ջանքերը ապարդիւս են եւ քրիստոնէաները հետզհետէ կը բազմանան, զայրացաւ եւ սպաննել տուաւ թէ՛ Սանդուխտ կոյսը եւ թէ՛ Թադէոս առաքեալը, 66 թուին:

Թադէոս առաքեալի քարոզութեան ժամանակ Հայաստան եկաւ նաեւ Քրիստոսի տասներկու առաքեալներէն Բարթողիմէոս առաքեալ, որ սիրով նուիրուեցաւ քրիստոնեական կեանքի քարոզութեան եւ տարածումին:

Բարթողիմէոս առաքեալ կը կոչուէր նաեւ Նաթանայէլ: Նաթանայէլն է նաեւ առաջին առաքեալը, որ Քրիստոսի աստուածութիւնը դաւանեցաւ ըսելով. «*Դու ես Աստուծոյ Որդին*»: Այս պատճառով ալ ստացած է Նախադաւան առաքեալի փառաւոր կոչումը:

Բարթողիմէոս առաքեալ իր քարոզութեան սկսած է Պարսկաստանի կողմերը եւ հասած մինչեւ Հնդկաստանի սահմանները: Ասորիներուն քարոզելէ ետք է որ կը մտնէ Հայաստան, Սիւնեաց աշխարհէն: Առաքեալը կը սկսի քրիստոնէութիւն քարոզել Հայաստանի մէջ եւ մեծ թիւով հայեր քրիստոնէայ կը դառնան, անոնց մէջ կը գտնուի նաեւ Սանատրուկ թագաւորին քոյրը՝ Ոգուիի իշխանուհին:

Թագաւորը երբ կը լսէ, Տերենտիոս հազարապետը կը դրկէ, որպէսզի նորադարձները կռապաշտութեան հրաւիրէ: Սակայն հազարապետը ինքն ալ կը հաւատայ Քրիստոսի եւ կը մկրտուի: Վերջապէս, Բարթողիմէոս առաքեալ, Ոգուիի եւ Տերենտիոս ատեան կը հանուին: Անոնք իրենց ճշմարիտ հաւատքին վրայ անսասան կը մնան: Թագաւորը զայրացած փշոտ գաւազաններու հարուածներով կը սպանէ Առաքեալը, իսկ իր քոյրը եւ հազարապետը սրամահ կը դառնան, 68 թուին: